

ԿԵՏԱԴՐԱԿԱՆ ԱՆՄԻՕՐԻՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԴԵՊՔԵՐ ԵՎ, ՈՒ, ԿԱՄ
ՇԱՂԿԱՊԵՐՈՎ ԲԱԶՄԱՐԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Գ. Լ. ԳԱՐԵԳԻՆՅԱՆ

Ժամանակակից հայերենի կետադրության հարցերը առ այսօր դիտա-
կան լուրջ ու մանրակրկիտ ուսումնասիրության առարկա չեն դարձել հայ-
քերականագիտության մեջ ոչ տեսական, ոչ էլ գործնական տեսակետից:
Մասնավորապես մտահոգիչ է գործնական արժեք ունեցող, գործնական
նպատակներ հետապնդող աշխատանքների բացակայությունը, որը խիստ
բացասաբար է անդրադառնում շատ ու շատ շարահյուսական կառույցների ու
ենթակառույցների կետադրման միասնականությունն ու միօրինակությունը
ապահովելու հույժ կարևոր խնդրի վրա: Եղած կետադրական կանոններն ու
հանձնարարականները, որոնք գերազանցապես ամփոփված են դասագրք-
քերում, ինչ խոսք, խիստ ընդհանուր են և դասագրքային հանրահայտ ճշ-
մարտություններից այն կողմ չեն անցնում: Եվ հասկանալի է, որ աշակեր-
տական նստարանից յուրաքանչյուր գրագետ մարդու հայտնի այդ կանոն-
հանձնարարականները ի վիճակի չեն շտկելու այդ բացը: Բոլորս էլ զգում
ենք, գրելիս թե ընթերցելիս, թե որքան չլուծված հարցեր կան այս ոլոր-
տում և թե որքան շատ են կետադրական տարբերությունները մեր գրա-
վոր խոսքում:

Անդրադառնանք կետադրական նման մի չկարգավորված խնդրի:
Փաստ է, որ մենագիր և, ու, կամ շաղկապներով կապակցվող բաղադրիչնե-
րի կետադրությունը ժամանակակից հայերենում առ այսօր վերջնականա-
պես կարգավորված և միօրինականացված չէ: Հարցն այն է, որ այս շաղ-
կապներով կարող են կապակցվել ոչ միայն նախադասության համազոր-
անդամներ և նույն (ընդհանուր) կամ տարբեր (ոչ ընդհանուր) ենթականե-
րով ձևավորված ինքնուրույն ու անկախ համադաս նախադասություններ, այլ
'հաև՝ սո) նույն գլխավորին ստորադասված համասեռ (համաստորադաս)
երկրորդականներ, բ) ընդհանուր երկրորդական ունեցող համադաս գլխա-
վորներ, ինչպես նաև՝ գ) որևէ պարզ և որևէ բարդ ստորադասական նախա-
դասություն կամ երկու բարդ ստորադասական նախադասություն: Ի՞նչ նա-
խադասությունների համազոր անդամների և ինքնուրույն ու անկախ համադաս
նախադասությունների կապակցության դեպքում կետադրությունը (այսինքն
ստորակետ դնելը կամ չդնելը) ինչ-որ չափով կարգավորված է, հետևաբար
և ինչ-որ չափով միօրինականացված¹, ապա թվարկված բաղմաբարդ կա-
ռույցներում համադասվող բաղադրիչ նախադասությունների կետադրությու-
նը ընդհանրապես կանոնարկված չէ և «կարգավորվում է» սոսկ սուբյեկտիվ
գործոններով, անհատական պատկերացմամբ, շատ հաճախ էլ՝ ով ինչպես
ցանկանա:

Սույն քննության մեջ փորձ է արվում համապատասխան հանձնարարա-
կաններով և առաջարկներով կանոնարկել և կարգավորել նշված առաջին

¹ Ինչ-որ չափով ենք ասում, որովհետև առ այսօր միօրինակ կետադրմամբ չեն ներկա-
յացվում մենագիր և, ու, կամ շաղկապներով կապված՝ ա) նույն կամ տարբեր ենթատեսակի
միակողմ նախադասությունները, բ) հարցական, հրամայական (հորդորական) և բացական-
չական նախադասությունները, գ) այն համադասված բաղադրիչները (բառ, բառակապակցու-
թյուն կամ նախադասություն), որոնց միջև առկա են երկու կողմից տրոհման ենթակա շարա-
հյուսական միավորներ (բացահայտիչ, կոչական, տրոհվող լրացումներ, երկրորդական նա-
խադասություն և այլն) և ուրիշ մի քանի այլ կառույցներ:

երկու կետերի տակ ամփոփված կառույցների բաղադրիչների կետադրությունը, ճշտելով, թե ո՞ր դեպքում պետք է և, ու, կամ² մենագիր շաղկապներով կապակցվող այդ բաղադրիչների միջև ստորակետ դնել, ո՞ր դեպքում՝ ոչ:

Նման կայուն չափանիշների մշակումը և հանձնարարումը հնարավորություն կտա միասնական մոտեցում ցուցաբերելու թվարկված բազմաբարդ նախադասությունների բաղադրիչները կետադրելիս՝ վերջ տալով կետադրական խառնաշփոթին այս հարցում: Պետք է նկատի ունենալ նաև, որ, ինչպես կտեսնենք քիչ հետո, ստորակետի առկայությունը կամ բացակայությունը և, ու, կամ շաղկապներից առաջ կարող է փոխել նրանցով կապվող բաղադրիչների իմաստային և շարահյուսական փոխհարաբերությունները, գրանոմի իսկ նաև ամբողջ բարդ նախադասության բովանդակությունը:

Պետք է ասել, որ նշված կառույցների կետադրման անմիօրինակությունը մասնակի երևույթ չէ, սոսկ հեղինակային վրիպում չէ, խմբագրական կամ սրբագրական աշխատանքի թերացման արդյունք չէ, այլ հետևանք է որոշակի սկզբունքներով հիմնավորված ու հստակորեն ձևակերպված կետադրական կանոնների ու հանձնարարականների բացակայության³: Չպետք է կարծել նաև, որ միօրինակության բացակայությունն այս հարցում սոսկ հեղինակային նախասիրությունների հետ է կապված: Հաճախ հենց նույն հեղինակը նույն գրքում (կամ հոդվածում), հաճախ նաև նույն էջում՝ ա) ինչպես գլխավորին ստորադասված համասեռ երկրորդականներով և բ) ընդհանուր երկրորդական ունեցող համադաս գլխավորներով կառույցները ներկայացնում է տարբեր կետադրմամբ՝ նշված շաղկապներից առաջ ըստ ցանկության մերթ ստորակետ դնելով, մերթ չդնելով, ինչպես՝

ա) «Սերմնացանը ցանում է սերմը, երբ ետ են գնում ջրերը և գետինն ևստում է թաց տիղմը» (ԱԲ, 239): «Երբ գլուղում հարավից լսեցին թնդանոթի առաջին որոտը, և նահանջող թշնամին ետ դարձրեց ձիերի գլուխը, թշնամու թիկունքում պայթեց ապստամբությունը» (ԱԲ, 239—240):

Բ) «Եթե երկու տարի հողերը չվարեն, անտառն իր մեջ կառնի Աթարին, քամին՝ լորենու սերմերը շաղ կտա, թռչունները կաղին կտանեն կտուրների վրա, և հանգած թռչնի մեջ կաղինն իր արմատները կխրի» (ԱԲ, 24): «Աթա ապերն այդ լեռնցի ծերունիներից էր և երբ թափորը գլուղից դուրս եկավ, հանկարծ նրա սիրտը փլվեց և ծերունին սկսեց ողբ ասել» (ԱԲ, 370):

Նկարագրվող կառույցների կետադրական անմիօրինակությունը կարելի է բացատրել երկու գործոններով. առաջին գործոնն այն է, որ այստեղ իր աղեկցությունն է գործում այն ընդհանուր կետադրական կանոնը, ըստ որի և, ու, կամ շաղկապների առաջ ստորակետ է դրվում, եթե նրանցով կապված համադաս նախադասությունները ընդհանուր ենթակա չունեն: Ահա այս կանոնի հիման վրա էլ «կարգավորվում է» ստորակետի գործածությունը հարցը: Սակայն եթե այս կանոնը գրեթե անթերի գործում է այն անխառն բարդ համադասական նախադասություններում, որոնց բաղադրիչները երկկազմ են, ապա զգալի տատանումներ է տալիս այն բարդ համադասա-

² Կամ-ը իր կետադրությամբ արդեն գրեթե հարել է և, ու շաղկապներին, ուստի և վերջին տարիներին լույս տեսած շարահյուսության դասադրքերում այն դասվել է և, ու շաղկապների շարքը:

³ Սվ, կամ շաղկապներով կապված համասեռ երկրորդականների և և, ու շաղկապներով կապակցված համադաս գլխավորների միջև ստորակետ չդնելու առաջարկ է արված Ա. Ղարիբյանի և Գ. Պարիսի «Հայոց լեզվի քերականության, ուղղագրության և կետադրության ուղեցույց» (Երևան, 1957, էջ 303, 305) աշխատության մեջ: Նույնպիսի առաջարկ է արված նաև Գ. Գարեգինյանի «Ժամանակակից հայոց լեզուն Բարդ նախադասություն» աշխատության մեջ (Երևան, 1984, էջ 325, 336, 396), ուր համապատասխան օրինակներով հիմնավորվում է, թե ինչու պետք է խուսափել ստորակետի գործածությունից և, ու, կամ շաղկապներով կապված նշված բաղադրիչների միջև:

կան նախադասություններում, որոնց բաղադրիչները տարբեր ենթատիպերի միակազմ նախադասություններ են կամ որոնց բաղադրիչներից մեկը երկկազմ է, մյուսը միակազմ:

Առավել մեծ տատանումներ է տալիս հիշյալ կանոնը 1) այն բարդ համադասական նախադասություններում, որոնք ինքնուրույն ու անկախ չեն, այլ միասնաբար ստորադասված են որևէ առաջադաս գլխավոր նախադասության, և 2) այն բարդ համադասական նախադասություններում, որոնք, ունենալով իրենց ստորադասված ընդհանուր երկրորդական, միաժամանակ հանդես են գալիս որպես համադաս գլխավորներ: Ահա այս կառույցներում է, որ կանոնը կորցնում է իր ազդեցությունը՝ դիրքերը ղիջելով շարանջուսակաճ և իմաստային գործոնին: Այստեղ միայն ասենք, որ երբ նշված շաղկապներով սկսվող վերջին համասեռ երկրորդական նախադասությունից առաջ ստորակետ ենք դնում, ապա այդ նախադասությունը կարող է այլևս չընկալվել որպես երկրորդական, այլ ընկալվել սոսկ որպես ինքնուրույն ու անկախ նախադասություն՝ համադասված առաջադաս բարդ ստորադասական նախադասությանը: Նույնպիսին է վիճակը նաև այն բարդ նախադասություններում, որոնք ձևավորված են մի քանի համադաս գլխավորներով և առաջադաս ընդհանուր երկրորդականով: Այս դեպքում ևս համադաս գլխավորներից այն, որն սկսվում է նշված շաղկապներով և որի առաջ ստորակետ է գրված, կարող է չընկալվել որպես ընդհանուր երկրորդականով բացահայտված գլխավոր նախադասություն, այլ ընկալվել որպես սոսկ համադաս նախադասություն, որին այլևս չի վերաբերի երկրորդականով արտահայտված իմաստային հարաբերությունը՝ պատճառ դառնալով ընդհանուր բարդ նախադասության բովանդակության փոփոխություն:

Այժմ քննենք վերևում հիշված կառույցների կետադրության հարցը՝ փորձելով համապատասխան օրինակներով հիմնավորել, թե ո՞ր դեպքերում և ինչո՞ւ պետք է խուսափել և, ու, կամ շաղկապներից առաջ ստորակետ դնելուց և ո՞ր դեպքերում և ինչո՞ւ պետք է նրա գործածությունը պարտադիր համարել:

Ա. Կետադրությունը և, ու, կամ շաղկապներով կապվող համասեռ երկրորդականներով կառույցներում

Ինչպես ասել ենք, նույն գլխավորին ստորադասված համասեռ (այլ տերմինով՝ համաստորադաս) երկրորդականները, շաղկապներով կապված լինեն միմյանց հետ, թե առանց շաղկապների, իրարից անջատվում են ստորակետներով: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ նրանք կապվում են և, ու, կամ շաղկապներով: Այս դեպքում այդ շաղկապներից առաջ ստորակետը բացակայում է, երբ այդ համասեռ երկրորդականները ձևավորված են լինում ընդհանուր ենթակայով և բազմակի ստորոգյալներով կամ արտահայտված են լինում նույն ենթատեսակին պատկանող դիմավոր միակազմ նախադասություններով: Սակայն երբ նրանք ձևավորված են լինում ոչ ընդհանուր ենթակայով (այսինքն տարբեր քերականական ենթականերով) կամ տարբեր ենթատեսակների պատկանող դիմավոր միակազմ նախադասություններով, ապա այս դեպքում կետադրության հարցը մնում է չկարգավորված, և հավասարապես հանդիպում են ինչպես ստորակետով, այնպես էլ անստորակետ տարբերակներ: Ընդհանուր միտումը, սակայն, վերջին տարբերակի կողմն է: Կետադրման նման «ազատությունը», ավելի ճիշտ, չկարգավորված, չկանոնարկված վիճակը չի կարող հանդուրժելի համարվել: Այսպես, ցանկացած գրքում, ցանկացած լրագրում, երբեմն նաև նույն պարբերության մեջ հնարավոր է հանդիպել նշված շաղկապներով սկսվող համասեռ երկրորդականների ինչպես ա) անստորակետ, այնպես էլ բ) ստորակետով կապակցության դեպքերի, ինչպես՝

ա) «Հեղինակներն ապացուցում են, որ հնդկավրդպական նախաճաշերն ենք գտնվել է Հայկական լեռնաշխարհում և որ հայոց լեզուն ու հայերը

ծագել են այստեղ, այսինքն՝ բնիկ են» (ԾԾ, 26. XI. 1988): «Օղաշունները պետք է ինքնաթիռների մեջ նստեին մարտական պատրաստության մեջ և վեր բարձրանային ամեն անգամ, երբ նրանք տեսնում են հակառակորդի ինքնաթիռները կամ երբ սաղիռնեռախոսով նրանց կհաղորդեն այդ ինքնաթիռների երևալու մասին» (ԱՅ, 459): «Նա առաջինն է ֆրանսահայ նկարիչներից, որի գործերը ցուցադրվեցին Սովետական Հայաստանում և որը անհատական ցուցահանդեսով հանդես եկավ Սիրիում» (ԾԾ, 19. IX. 1988): «Մենք պարտավոր ենք ամեն ինչ անել, որպեսզի հավերժեն խաղաղության գաղտնիները և միայն ծաղկաբույսերով լցված լինի մեր երեխաների մանկությունը» (ԱՎ. 7. IX, 1986):

բ) «Երբ թերապևտիկ եղանակները չօգնեցին, և երբ միաժամանակ հրաժարվեցին գործել հիվանդի երկու երիկամները, այլևս ուրիշ ելք չմնաց, քան դիմելը դոնորական օրգանի պատվաստմանը» (մամուլ): «Եթե պարտեզի ղոնակը բացվեւ, կամ մի հաւեան տուն գար, Զանին տեղից վեր էր կենում, փեշերը թափ տալիս ու բարկանում կատվի վրա» (ԱԲ, 433):

Անմիօրինակ կենտրոնական այս դեպքերը այնքան տարածված են, որ հանդիպում են նույնիսկ նույն պարբերության և մինչև իսկ նույն նախադասության մեջ, ինչպես՝ «Ամենքին հայտնի է, թե պետությունը ինչ հսկայական միջոցներ է տրամադրում բնակարանային շինարարությանը և թե ինչպիսի կարևորություն է տրվում դրա որակին: Ոչ ոք իրավունք չունի մտածելու, թե վատ բնակարան ստանալը լավ է շատանալուց, և որ նոր տուն ստանալու փաստից երջանիկ՝ մարդիկ լռելյայն կընդունեն իրենց մատուցած խոտանը...» (ՍՀ, 11. XI. 1987): «Փառք Աստծու, որ վերջապես հասկացել ենք, որ մեր ուժը մեր միասնության մեջ է, և որ մենք ենք այս լեռների տերը և ինքներս պետք է պաշտպանենք մեր տունը» (ԽՀ, 30. I. 1990):

Անշուշտ միասնական մոտեցում է պետք խնդրո առարկա կառույցների կենտրոնական հարցում, որի համար հարկ է մեկընդմիջտ ճշտել՝ պե՞տք է արդյոք և, ու, կամ շաղկապներից առաջ ստորակետ դնել, երբ նրանցով կապված համասեռ երկրորդականները ձևավորված են տարբեր քերականական ենթականերով կամ արտահայտված են տարբեր ենթատեսակների պատկանող դիմավոր միակազմ նախադասություններով, թե ոչ: Մեր հաստատ համոզմամբ՝ ոչ: Եվ ոչ միայն նրա համար, որ նույնատիպ կառույցներում ընդհանրապես հանդուրժելի չեն կենտրոնական անմիօրինակությունները, այլ մանավանդ նրա համար, որ հանդիպում են ոչ քիչ թվով կառույցներ, որոնք կենտրոնական այս չկարգավորված վիճակի պատճառով երկակի մեկնաբանության տեղիք են տալիս: Դա պատահում է մասնավորապես այն դեպքերում, երբ համասեռ երկրորդականները վերջադաս դիրք են գրավում գլխավորի նկատմամբ, իսկ ստորադասական շաղկապը կամ հարաբերական դերանունը չի կրկնվում այդ երկրորդականներից յուրաքանչյուրի առաջ: Քրեներենք հետևյալ օրինակը՝ «Հայրն իմացել է, որ որդին անհաջող է հանձնել ջննությունը (,) և հուսահատության գիրկն է ընկել»:

Ստորակետի առկայությամբ՝ հայրն է հուսահատության գիրկն ընկել, ստորակետի բացակայությամբ՝ որդին, ստորակետի առկայությամբ «հուսահատության գիրկն է ընկել» նախադասությունը գլխավորին ստորադասված համասեռ երկրորդականներից մեկը չէ, այլ առաջադաս ամբողջ բարդ ստորադասական նախադասությանը համադասված ինքնուրույն ու անկախ նախադասություն, մինչդեռ ստորակետի բացակայությամբ այն գլխավորին ստորադասված երկու համասեռ ուղիղ խնդիր երկրորդականներից մեկն է՝ վերջադասը՝ համադասված արդեն ոչ թե առաջադաս ամբողջ բարդ ստորադասական նախադասությանը, այլ իրեն նախորդող երկրորդականին: Բարդ նախադասության կառուցվածքի՝ կենտրոնական պայմանավորված նշված փոփոխությունը, ինչպես տեսնում ենք, ազդել է այդ նույն բարդ նախադասության բովանդակության վրա, քանի որ, ինչպես ասացինք, կառուցվածքային առաջին տարբերակով (ստորակետի առկայությամբ) հայրն է հուսահատության գիրկն ընկել, իսկ երկրորդ տարբերակով (ստորակետի բա-

ցակայությունը)՝ որդին: Քննենք մեկ այլ օրինակ՝ «Հայրն իմացել է, որ որդին անհաջող է հանձնել քննությունը (,) և ընկերները նրան հանգստացրել են»: Այստեղ ևս ստորակետի առկայությունը կամ բացակայությունը պատճառ է դառնում համանման կառուցվածքային փոփոխության, այսինքն առաջին դեպքում ունենում ենք խառը տիպի բաղմաբարդ համադասական նախադասություն՝ կազմված մեկ բարդ ստորադասական նախադասության և նրան համադասված մեկ պարզ նախադասության կապակցությունից, իսկ երկրորդ դեպքում՝ նույն գլխավորին ստորադասված համասեռ երկրորդականներով կառույց: Ըստ այդմ էլ կառուցվածքային առաջին տարբերակով հոր ընկերները հորն են հանգստացրել, իսկ երկրորդ տարբերակով՝ որդու ընկերները՝ որդուն:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, նման կառույցներում իրար են հակադրվում երկու գործոն՝ պատճառ դառնալով անմիջորինակ կետադրության. առաջինը վերը նշված այն ընդհանուր կետադրական կանոնի խիստ ուժեղ ազդեցությունն է, որը աշակերտական շրջանից սկսած «ահեղ» ահազանգի նման մեզ հիշեցնում է իր մասին՝ շահնդուրծելով ոչ մի «շեղում» կամ «զիջում» (քանի որ բացակայում են նման «շեղումների» կամ «զիջումների», այլ խոսքով ասած, բացառությունների վերաբերյալ կանոններ ու ենթականոններ), երկրորդը շարահյուսական-իմաստային բնույթի է, որը բխում է լեզվի, որպես հաղորդակցման միջոցի, ներքին էությունից և որը ձգտում է շարահյուսական և իմաստային հարաբերությունների հստակ արտահայտմանը՝ ապահովելու համար հաղորդման հնարավոր ճշգրտությունը (թեկուզ և անտեսելով «կաշկանդիչ» կանոնները): Կասկած չկա, որ առավելություն պետք է ստանա երկրորդ գործոնը:

Կետադրության իմաստատարբերակիչ դերը շատ պարզ երևում է նաև հետևյալ օրինակում՝ «Մինիստրությունից նախազգուշացրին, որ շինանյութերի առաքումը ընդհատումներով է լինելու (,) և մենք պարտավոր ենք այս հանգամանքը հաշվի առնել»: Բերված նախադասությունը կարող է երկու մեկնաբանություն ստանալ. ա) մինիստրությունը նախազգուշացրել է երկու իրողության մասին՝ 1) շինանյութերի առաքումը ընդհատումներով է լինելու, 2) մենք պարտավոր ենք այդ հանգամանքը հաշվի առնել. բ) մինիստրությունը նախազգուշացրել է մեկ իրողության մասին՝ շինանյութերի առաքումը ընդհատումներով է լինելու: Այս երկու մեկնաբանությունները միմյանցից սահմանազատելու և իմաստային երկվությունից խուսափելու միակ միջոցը այն կարգավորիչ կետադրական հանձնարարականի ընդունումն է, ըստ որի նշված շաղկապներից առաջ ստորակետ երբեք չպետք է դնել, երբ նրանցով կապվում են նույն գլխավորին ստորադասված համասեռ երկրորդականներ և, ընդհակառակը, նրա գործածությունը նշված շաղկապներից առաջ պետք է պարտադիր համարել, երբ նրանցով սկսվող նախադասությունները համադասված չեն նույն գլխավորին: Այսպիսով, վերը բերված բարդ նախադասության մեջ և շաղկապից առաջ ստորակետ չպետք է դնել, եթե նրանով կապված նախադասությունները համասեռ են (այս դեպքում կարճանագրվի, որ մինիստրությունը նախազգուշացրել է երկու իրողության մասին) և, ընդհակառակը, պետք է ստորակետ դնել, եթե այդ նախադասությունները համասեռ չեն (այդ դեպքում կարճանագրվի, որ մինիստրությունը նախազգուշացրել է միայն մեկ իրողության մասին): Ակնհայտ է, որ կետադրական այս երկու տարբերակներով (ստորակետի բացակայությամբ և առկայությամբ) մենք ունենում ենք երկու տարբեր կառուցվածքի նախադասություններ՝ հաճախ իմաստային էական տարբերություններով:

Համանման օրինակներ են նաև հետևյալները, որոնք, վերը նշված կարգավորիչ կանոնի բացակայության պայմաններում, կարող են, ինչպես և արդեն քննված օրինակներում, ստանալ երկու տարբեր մեկնաբանություն:

ա) Ստորակետի առկայությամբ օրինակներ՝

«Դիտական լուրջ շրջաններին հայտնի է, որ ադրբեջանցի պատմաբանների «տեսությունը» գիտության հետ որևէ առնչություն չունի, և նրանց հետ վեճի բռնվելը անիմաստ աշխատանք է» (ՆՆ, 1. IX. 1989): «Հիշում եմ այն երեկոն, երբ Չարենցը կուլտուրայի տան դահլիճում կարդաց «Քամին Ուկրաինայից» սքանչելի բանաստեղծությունը, և բեմում նրանք զրկախառնե-վեցին» (ՀՀ, 197): «Թուրքին հայտնի է, որ Դավիթ-Բեկի վերքը բացվել է, ու նրա վիճակը օր-օրի անճուսալի է դառնում» (ԱՆ, 481):

բ) Ստորակետի բացակայությամբ օրինակներ՝

«Նա գրեթե միակն էր, որ հայտարարեց, թե գալակտիկական միջուկներում տեղի են ունենում հզոր պրոցեսներ և աստղագետները պետք է դրանք լրիվ հաշվի առնեն» (ՍՀ, 17. IX. 1988): «Ոչ մի ընդհանուր կասկածում, որ նրան աղատ կարծիքներ ու մեկ կզենեմ նրան տեսության»: «Ասում են, որ կարկուտը ոչնչացրել է կարտոֆիլի ցանքսերը և տնտեսության ղեկավարը այդ մասին տեղեկություն չունի»:

Առաջին խմբի օրինակներում անհնարին է որոշել, թե ընդգծված նախադասությունները գլխավորի՞ն են ստորադասված, թե ինքնուրույն ու անկախ նախադասություններ են՝ համադասված առաջադաս ամբողջ բարդ ստորադասական նախադասությանը (այսինքն ընդգծված հատվածին), և քանի որ այս հարցը մնում է անլուծելի, ապա և անհնար է խուսափել իմաստային երկդիմությունից: Օրինակ, անհնար է պարզել, թե «գիտական լայն շրջաններին հայտնի է» միայն այն, «որ ադրբեջանցի պատմաբանների «տեսությունը» գիտության հետ որևէ առնչություն չունի», թե՞ նաև այն, որ «նրանց հետ վեճի բռնվելը անիմաստ աշխատանք է»: Հիշյալ կառույցներում նման երկդիմությունները, ինչպես ասել ենք, կարելի է վերացնել միայն վերը նշված հանձնարարականների ընդունմամբ:

Ինչ վերաբերում է երկրորդ խմբի օրինակներին, ապա այս դեպքում հակառակ պատկերն է. ստորակետի բացակայությունը այդ շաղկապներից առաջ ենթադրել է տալիս, որ հեղինակները հաշվի են առել լեզվի զարգացման միտումը և համասեռ երկրորդականները ստորակետով չեն բաժանել, իսկ եթե դրանք համասեռ երկրորդականներ չեն (բերված օրինակների վերաբերյալ նման մեկնաբանությունը լիովին հնարավոր է), ապա այդ շաղկապներից առաջ պետք է անպայման ստորակետ դրվեր: Ինչպես տեսնում ենք, ստորակետի առկայությունը կամ բացակայությունը նպաստում է սահմանազատելու երկու տարբեր կառույցներ մեկը մյուսից՝ միաժամանակ կանխելով երկդիմությունները և ապահովելով արտահայտվող մտքի հստակությունը:

Այս կարգի երկդիմությունները բացառվում են, երբ ա) համասեռ երկրորդականները առաջադաս դիրք են գրավում գլխավորի նկատմամբ կամ երբ բ) նրանցից յուրաքանչյուրի առաջ ստորադասական շաղկապը կամ հարաբերական դերանունը կրկնվում է կամ փոխարինվում այլ ստորադասական շաղկապով կամ հարաբերական դերանվամբ: Սակայն, անկախ այս հանգամանքից, կանոնը պետք է համընդհանուր լինի և տարածվի նաև այս կառույցների վրա, որոնք նույնպես հանդիպում են ինչպես ստորակետով, այնպես էլ անստորակետ տարբերակներով, ինչպես՝

ա) «Ձեր ասածն ինձ հայտնի է, բայց երբ լրագրի համար ես գրում և ստամոքսը կերակուր է պահանջում, անիրագործելի է», (Բ, էջ 41): «Որպեսզի ինչ-որ բան տեղաշարժվի, և նպատակները դառնան իրական, անհրաժեշտ է նախ և առաջ ունկնդրել լեզվի ու գրականության ուսուցիչներին» (ԳԹ, 19. XII. 1986):

բ) «...Որը հայտարարեց, թե ես շատ բան եմ պահանջում և թե յուրաքանչյուր հարձակողական օպերացիայում ռիսկի մասնիկ գոյություն ունի» (ՀՀ, 239): «Արյունալի մղձավանջները տեղի են ունեցել Անդրկովկասի գրեթե բոլոր այն մեծ ու փոքր բնակավայրերում, որտեղ հայեր էին ապրում և ուր մոտեղ ունեին մահմեդականները» (ՍՀ, 21. XI. 1988): «Իսկ մեր խնդիրը հայացած համակարգիչի հիմքի վրա ուսուցման համակարգի ստեղծումն է:

Այնպիսի համակարգի, որ կարելի է առաջարկել ժողովրդին և որը մեկ-երկու հրահանգ բացատրությամբ կարողանա աշխատել և ուսուցանել» (ՀԶ, 27. XII. 1989):

Այս դեպքերում ևս, ինչպես ասացինք, և, ու, կամ շաղկապներով կապված համասեռ երկրորդականները չպետք է բաժանվեն ստորակետով:

Սակայն ստորակետի գործածությունը համասեռ երկրորդականների միջև, անմիջապես նշված շաղկապներից առաջ, արդեն պարտադիր է դառնում, երբ առաջին համասեռն ունենում է երկու կողմից տրոհման ենթակա վերջադաս լրացում (երկրորդական նախադասություն, տրոհվող լրացում, բացահայտիչ): Նման կետադրմամբ միջադասված և ստորակետերով անջատված շարահյուսական միավորը, որ մենք ներթրեքրյալ օրինակներում ընդգծել ենք, առանձնանում է և մեկուսանում, որով և ավելի հստակորեն են ընկալվում այն համասեռ երկրորդականները, որոնք ստորադասված են գլխավորին, ինչպես՝ 1) «Երբ Անդրանիկի սուրհանդակ Անդրեասը հրավեր բերեց, որ մենք գնանք Լոռի, և 2) դու ինձ կարգադրեցիր նրան ճանապարհ դնել, ես նկատեցի, որ Անդրեասը մտադիր է հարձակվել Իբրահիմ խանի վրա» (ԽԴ, 393): «Երբ սեղանը քաշեցին պատի տակ, որպեսզի տեղը մեծանար, և սկսեցին պարերը, «աղատ» մնաց միայն Վերան» (ԱԶ, 32): Ինչպես տեսնում ենք, ընդգծված երկրորդականները միջադասված են երկու համասեռ (№ 1 և № 2) երկրորդականների միջև, և ստորակետի առկայությունը նշված շաղկապներից առաջ հնարավորություն է տալիս հստակորեն սահմանադատելու այդ համասեռ երկրորդականները ընդգծված ենթաստորադաս երկրորդականներից:

Կարծում ենք, որ ստորակետի գործածությունը պարտադիր պետք է համարել նաև այն դեպքում, երբ երկրորդ համասեռն է ունենում իրեն ստորադասված վերջադաս երկրորդական նախադասություն, ինչպես՝ «Թեպետ օդը ծանր էր, և ոտքերը երկարել հնարավոր չէր, որովհետև տեղը մեղ էր, մենք գիշերը այդտեղ մնացինք» (ԽԴ, 33): Այս օրինակում ևս, ինչպես տեսնում ենք, ստորակետի առկայությունը և շաղկապով կապված համասեռ երկրորդականների միջև սահմանադատիչ դեր է կատարում՝ հստակորեն մատնանշելով, որ ընդգծված պատճառի պարագա երկրորդական կարգի երկրորդական նախադասությունը վերաբերում է միայն անմիջականորեն իրեն նախորդող համասեռ երկրորդականին և ոչ թե հավասարապես առաջադաս երկու համասեռներին: Վիճակը այլ է հետևյալ օրինակում, ուր ընդգծված պատճառի պարագա երկրորդականը, իր համապատասխան բովանդակության պատճառով, կարող է հավասարապես վերաբերել ինչպես երկու առաջադաս համասեռ երկրորդականներին (այս դեպքում ստորակետի գործածությունը պետք է բացառվի), այնպես էլ դրանցից միայն երկրորդին (այս դեպքում նրա գործածությունը պետք է պարտադիր համարել), ինչպես՝ «Թեև օդը ծանր էր (,) և ոտքերը երկարել հնարավոր չէր, որովհետև բոլորս հավաքվել էինք այդ փոփոխ խցում, մենք գիշերը այդտեղ մնացինք»:

Այլ օրինակներ՝ 1) «Փանի որ հայրս ուրախ բնավորություն ուներ, միշտ պատրաստ արմուկը վեր բարձրացնելու ու 2) խոսքն էլ թեթև էր, պատկերավոր, քնարերգական, միշտ նա էր ղեկավարում հայկական սեղանները» (ՇԱ, 11): Այս օրինակում ընդգծված բառակապակցությամբ արտահայտված տրոհվող լրացումը, որը միջադասված է № 1 և № 2 պատճառի պարագա համասեռ երկրորդականների միջև, պետք է վերջից ևս՝ անմիջապես ու շաղկապից առաջ ստորակետ ստանալ: Բացահայտիչի միջդասման օրինակ՝ «Հայրս հայտնեց, որ 1) քննություն է հանձնել նաև Արամը՝ մեր հարևանի տղան, և արդյունքը վատ չի եղել»:

Բ. Կետադրությունը և, ու, կամ շաղկապներով կապված և ընդհանուր երկրորդական ունեցող համադաս գլխավորներով կառույցներում

Այս կառույցներում ևս, ինչպես ասել ենք, կետադրությունը խիստ անմիջական է: Նշված շաղկապներից առաջ ստորակետը մշտապես բացակա-

յում է, երբ նրանցով կապվում են ընդհանուր ենթակայով և բազմակի ստորագլխներով ձևավորված համադաս գլխավոր նախադասութիւններ, ինչպես՝ «Երբ լույսը բացվեց, տնից դուրս եկա և գնացի անտառ»:

Սակայն երբ այդ համադաս գլխավորները ձևավորված են լինում քերականական տարբեր ենթականերով կամ արտահայտված են լինում տարբեր ենթատեսակների պատկանող դիմավոր միակազմ նախադասութիւններով, ապա կետադրման միասնականութիւնը խախտվում է, և նշված շաղկապներից առաջ ստորակետ դնելու կամ չդնելու հարցը չկարգավորված բնույթ է ստանում:

Հարցն այն է, որ եթե հաշվի առնենք տարբեր ենթակաների առկայութիւնը այդ համադաս գլխավոր նախադասութիւններում և դրանք կապակցող և, ու, կամ շաղկապներից առաջ ստորակետ դնենք, ապա անհնար կլինի տարբերել այդ կառույցները այն կառույցներից, որոնք կազմված են առաջադաս երկրորդականով որևէ բարդ ստորադասական նախադասութիւն և նշված շաղկապներով նրան համադասված որևէ ինքնուրույն համադաս նախադասութիւն կապակցութիւնից: Զէ՞ որ այս վերջին դեպքում էլ այդ շաղկապներից առաջ ստորակետ է դրվում: Այսպես՝ «Մինչ կծամաներ երկրորդ ուղղաթիւր՝ նոր համալրումով, կռիվն արդեն վերջացել էր, և գրոհայինները հետ էին քաշվել» (ԽՀ, 30. I. 1990): Այս կետադրմամբ հնարավոր չէ որոշել, թե ընդգծված նախադասութիւնը ընդհանուր երկրորդական է՝ հավասարապես երկու համադաս գլխավորներին վերաբերող, թե ընդհանուր երկրորդական չէ և վերաբերում է միայն «կռիվն արդեն վերջացել էր» գլխավորին: Սրանք տարբեր կառույցներ են և պետք է միմյանցից սահմանազատվեն համապատասխան կետադրութեամբ: Առաջին դեպքում պետք է բացառվի ստորակետի գործածութիւնը նշված շաղկապներով կապված համադաս գլխավորների միջև, որպեսզի ընդգծված երկրորդականը հավասարապես վերաբերի երկու գլխավորներին, իսկ երկրորդ դեպքում, ընդհանրականը, և շաղկապից առաջ պետք է ստորակետ դնել, որպեսզի այդ երկրորդականը այլևս չվերաբերի նրանով սկսվող երկրորդ համադասին, որն այս դեպքում՝ արդեն կզրկվի գլխավոր նախադասութիւն իր շարահյուսական դիրքից՝ վերածվելով սոսկ նախորդ բարդ ստորադասական նախադասութիւնը համադասված ինքնուրույն ու անկախ նախադասութիւն: Առաջարկվող հանձնարարականը, եթե այն օրենքի ուժ ստանա և կիրառվի, հստակութիւն կմտցնի քննարկվող կառույցների կետադրութիւն մեջ, կնպաստի բաղադրիչ նախադասութիւնների շարահյուսական ու իմաստային փոխհարաբերութիւնների ճշգրիտ արտահայտմանը և մեկընդմիջտ վերջ կտա կետադրական խառնաշփոթին այս կառույցներում:

Այս տեսանկյունով մոտենալով հարցին և առաջնորդվելով առաջարկված հանձնարարականով, ստորև բերվող օրինակներում և, ու, կամ շաղկապներից առաջ չպետք է ստորակետ դրվեր, քանի որ ընդգծված ընդհանուր երկրորդականները, ելնելով այդ բարդ նախադասութիւնների բովանդակութիւնից, հավասարապես վերաբերում են վերջադաս բոլոր համադաս գլխավորներին, ինչպես՝ «Երբ դուրս եկանք, Փարիզի փողոցներն ամայի էին, ու թեթև անձրև էր մաղում» (ԽՀ, 7. IX. 1989): «Եթե մինչև սեպտեմբերի 20-ը թուրք բերող տրանսպորտը Հայաստան չհասնի, ապա 21-ին հանրապետութիւնում թերթերը լույս չեն տեսնի, և մարդիկ չեն կարողանա ծանոթանալ Կենտկոմի ներկա պլենումի նյութերին» (ԽՀ, 22. IX. 1989):

Եվ ընդհանրապես, ներքոբերյալ օրինակներում ընդգծված ընդհանուր երկրորդականները հազիվ թե վերաբերում են և շաղկապով սկսվող համադաս նախադասութիւններին, որոնց հետ նրանց իմաստային կապը թույլ է, ուստի և հարկ էր նշված շաղկապից առաջ ստորակետ դնել, ինչպես՝ «Հենց որ նա (Թուրք—Գ. Գ.) կանչում էր, սկսում էին ուղտերը բառնալ և քարավանը ելնում էր ճամփա» (ԽՀ, 304): «Մինչև փոքրատու Շենիֆցին իր

խոսքը կավարտեմ, Չոլոն շտապով մի փամփուշտ տվեց ինձ և ես մի դիպուկ հարվածով թռչունը վայր բերեցի երկնքից» (ԽԴ, 244):

Ի դեպ, նմանօրինակ կառույցներում ե-ով սկսվող համադաս նախադասությունը, համապատասխան բովանդակության առկայության դեպքում, հաճախ նշում է համադաս նախորդ հատվածում նկարագրված իրողություններից բխող հետևանքը: Այս դեպքում ևս ստորակետի առկայությունը այդ շաղկապից առաջ անհրաժեշտ է, ինչպես՝ «Երբ մոտովի կանգնեցի ջո դիմաց, մեկնեմ շքացան» բոլոր կոչումներդ, և դեմս մնաց հայրենասեր մի մարդ՝ ազնիվ, առաքինի, լավատես...» (ՀԶ, 6. XI. 1989): «Երբ իջնում է երեկոն, դաշտ ու այգուց տուն է դառնում հողի աշխատավորը, և չֆանում է գյուղի վրա իջած ցերեկվա լուսթյունը» (ՀԶ, 2. VII. 1986):

Երկակի մեկնաբանության տեղիք է տալիս մեր շարադրանքում (էջ 29) օգտագործված «երբ այդ համադաս գլխավորները ձևավորված են լինում տարբեր ենթականերով կամ արտահայտված են լինում տարբեր ենթատեսակների պատկանող դիմավոր միակազմ նախադասություններով, ապա կետադրման միասնականությունը խախտվում է, և նշված շաղկապներից առաջ ստորակետ դնելու կամ չդնելու հարցը չկարգավորված բնույթ է ստանում» նախադասությունը, ուր ստորակետի բացակայության դեպքում և շաղկապով սկսվող ընդգծված համադաս նախադասությունը ընկալվում է որպես ընդհանուր երկրորդական ունեցող համադաս գլխավոր նախադասություններից երկրորդը, իսկ նրա առկայության դեպքում՝ որպես առաջադաս բարդ ստորադասական նախադասությանը համադասված մի այնպիսի ինքնուրույն պարզ նախադասություն, որն արտահայտում է նրանից բխող հետևանքը:

Համադաս գլխավորները կարող են ունենալ ոչ միայն մեկ ընդհանուր երկրորդական, այլև մեկից ավելի, որոնք կարող են լինել ինչպես՝ ա) անհամասեռ, այնպես էլ՝ բ) համասեռ՝ կապված և, ու, կամ շաղկապներով: Այս կառույցների բաղադրիչների կետադրությունը ևս կարգավորվում է առաջարկված հանձնարարականներով, ինչպես՝

ա) Երբ Սուրենն իր պատմությունն ավարտեց, մենք զգացինք և ուսուցիչն էլ նկատեց, որ նա ամբողջ հշմարտությունը շասաց: բ) Գործարանը ծանր վիճակի մեջ ընկավ և դեկավարությունը խուճապի մատնվեց, երբ գազի մատակարարումը դադարեցրին և պահեստավորված ֆանակությունն էլ սպառվեց:

Այսպիսով, ընդհանրացնելով ասվածը, կարելի է եզրակացնել, որ և, ու, կամ շաղկապներից առաջ երբեք չպետք է ստորակետ դնել, երբ նրանցով կապված համադաս գլխավորները, անկախ իրենց կառուցվածքային տիպից, ունեն իրենց ստորադասված ընդհանուր երկրորդական: Այս կանոն-հանձնարարականի ընդունմամբ նշված կառույցները կսահմանազատվեն այն կառույցներից, որոնք բաղկացած են առաջադաս երկրորդականով որևէ բարդ ստորադասական նախադասության և նշված շաղկապներով նրան համադասված որևէ ինքնուրույն, անկախ նախադասության կապակցությունից: Այս դեպքում արդեն ստորակետի գործածությունը այս շաղկապներից առաջ պետք է պարտադիր համարել:

Գուցե թե հարկ է մտածել նաև այն բարդ համադասական նախադասությունների կետադրության մասին, որոնց բաղադրիչները կապված են նշված շաղկապներով և որոնք ունեն առաջադաս ընդհանուր լրացում կամ ընդհանուր միջանկյալ բառ, բառակապակցություն կամ նախադասություն: Քրենները հետևյալ օրինակը՝ «Երեկոյան վերջապես թուլատվությունը ստացվեց և Արամը ընտանիքով մեկնեց Լենինգրադ»: Նշված կետադրմամբ անորոշ է մնում՝ Արամը այս նույն երեկոյան է ընտանիքով մեկնել Լենինգրադ, թե ոչ: Հետևաբար գուցե թե պետք է այս դեպքում ևս հստակություն սահմանել՝ հանձնարարելով նշված շաղկապներից առաջ ստորակետ չդնել, եթե առաջադաս լրացումը հավասարապես վերաբերում է վերջադաս բոլոր հա-

մաղասներին, այսինքն երր այն ընդհանուր է, և, ընդհակառակը, ստորակետը անպայման ղնել, եթե այն վերաբերում է միայն մերձավոր, այսինքն առաջին համադասին, և չի վերաբերում նշված շաղկապներով սկսվող մյուս համադաս(ներ)ին:

Քննենք մի քանի այլ օրինակներ ևս՝

1) «Ինչ չէր բավականացնում սպառազինությունը, և ավարտված չէր մարդկանց ուսուցումը» (ԿՄ, 16): 2) «Այս կողմերում Արաքսը ելնում է իր ափերից, վարար ջրերը տիղմ են փռում լայն տափարակի վրա և առափնյա եղեգնուտները դառնում են կանաչ կղզիներ» (ԱՔ, 239): 3) «Մի ժամից հետո ամբողջ դաշտը կարծես վարած էր գութանով կամ հազարավոր խոզեր քանդ էին արել» (ՀԹ, 307): 4) Մեր ռոմանայնից, թե տեղեկների ուժեղացող սոսափից, նրա հաշիվը խառնվեց և նա նորից սկսեց համարանքը» (ԽԴ, 232): 5) «Ինչպես ինձ հայտնեց բժիշկը, Արամն արդեն ապաքինված է (,) և նրան դուրս են գրել հիվանդանոցից»:

Պե՞տք է արդյոք և շաղկապով կապված այդ համադաս նախադասությունները միմյանցից ստորակետով անջատել և այդ դեպքում ընդգծված ընդհանուր լրացումը չի՞ թուլացնի կամ չի խզի՞ արդյոք իր կապը երկրորդ համադասի հետ: Չէ՞ որ հնարավոր կլինեն դեպքեր, երբ այդ հանգամանքը կարող է վճռական նշանակություն ունենալ նախադասության բովանդակությունը ճիշտ ներկայացնելու տեսակետից: Առաջին օրինակում և շաղկապից առաջ ստորակետ է դրված, որով կարծես խզվում է դեռ ժամանակի պարագայի կապը երկրորդ համադասի հետ: Երկրորդ օրինակում ստորակետը բացակայում է, հետևաբար և հստակորեն մատնանշվում է, որ Այս կողմերում տեղի պարագան վերաբերում է նաև երրորդ համադասին: Երրորդ օրինակում նույնպես ստորակետի բացակայությունը կամ շաղկապից առաջ միանշանակ կերպով մատնանշում է, որ մի ժամից հետո տեղի պարագան հավասարապես վերաբերում է նաև երկրորդ համադասին: Ինչ վերաբերում է չորրորդ օրինակին, ապա այստեղ ընդգծված պատճառի պարագան վերաբերում է միայն առաջին համադասին, ուստի և հանձնարարելի կլիներ և շաղկապով սկսվող երկրորդ համադասից առաջ ստորակետ ղնել: Հինգերորդ օրինակում գերադասելի է և՛-ից առաջ ստորակետ ղնել, քանի որ ընդգծված միջանկյալ նախադասությունը վերաբերում է հավասարապես երկու համադաս նախադասություններին (Սուրենը հայտնել է ոչ թե մեկ, այլ երկու փաստի մասին):

Առայժմ ընդհանուր լրացում կամ միջանկյալ միավոր ունեցող և նշված շաղկապներով կապված համադաս նախադասությունները առավել հաճախ, գուցե ավելի ճիշտ կլինի ասել, մեծ մասամբ իրարից անջատվում են ստորակետով:

Ամփոփելով սույն քննությունը, գտնում ենք, որ նկարագրված կառուցներում բաղադրիչների կետադրությունը կանոնավորելու և նրանց շարադրուսական ու իմաստային փոխհարաբերությունները ավելի հստակ ու աներկդիմի ներկայացնելու համար անհրաժեշտ է ընդունել հետևյալ կետադրական հանձնարարականը՝ և, ու, կամ շաղկապներից առաջ ստորակետ երբեք ղնել, եթե նրանցով կապվում են նույն գլխավորին ստորադասված համասեռ երկրորդականներ և ընդհանուր երկրորդական(ներ) ունեցող համադաս գլխավոր նախադասություններ:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՔ — Ակսել Բակունց, Երկեր, Երևան, 1955:

ԱՅ — Ա. Ս. Յակովլև, Կյանքի նպատակը, Երևան, 1972:

ԱԶ — Ալեքսանդր Չակովսկի, Բլոկադա, 1-ին և 2-րդ գրքեր, Երևան, 1973:

ՀՔ — Հովհաննես Բաղդամյան, Այսպես մենք հասանք հաղթանակի, Երևան, 1979:

ԽԴ — Խաչիկ Դաշտենց, Ռանչարների կանչը, Երևան, 1984:

- ՀԹ — Հովհաննես Թումանյան, Երկեր, հ. 1, Երևան, 1958;
 ՀՀ — Հրայր Հովհաննիսյան, Ոսկի ամպ, Երևան, 1984;
 ՇԱ — Շառլ Ազնավուր, Ազնավուրը Ազնավուրի մասին, Երևան, 1976;
 ԿԴ — Կ. Կ. Ռոկոսովսկի, Ջինվորի պարտքը, Երևան, 1976;
 ՍԽ — Սերո Խանզադյան, Մխիթար սպարապետ, Երևան, 1963;
 Բ — Բաֆֆին ժամանակակիցների հուշերում, Երևան, 1986;
 ԱՎ. — Ավանդարդ
 ԳԹ — Գրական թերթ
 ԵԵ — Երեկոյան Երևան
 ԽՀ — Խորհրդային Հայաստան
 ՀՁ — Հայրենիքի ձայն
 ՍՀ — Սովետական Հայաստան

НЕКОТОРЫЕ СЛУЧАИ ПУНКТУАЦИОННОГО РАЗНОБОЯ В МНОГОЧЛЕННЫХ СЛОЖНЫХ ПРЕДЛОЖЕНИЯХ С СОЮЗАМИ *և, ու, կամ*

Г. Л. ГАРЕГИНЯН

Р е з ю м е

В некоторых типах многочленных сложных предложений современного армянского языка с союзами *և, ու, կամ* пунктуация не унифицирована. В частности, это наблюдается в сложноподчиненных предложениях с однородными придаточными предложениями и в сложных конструкциях с несколькими главными предложениями и общим придаточным. С целью урегулирования пунктуации в конструкциях с указанными компонентами, а также более четкого и недвусмысленного представления в них синтаксических и семантических отношений, перед союзами *և, ու, կամ* запятой ставить не следует, если они связывают однородные придаточные, относящиеся к одному ли тому же главному предложению, или же если сочиненные главные предложения имеют общее придаточное (придаточные) предложение. Эта пунктуационная рекомендация аргументируется соответствующими примерами.

SOME CASES OF PUNCTUATION LACK OF CO-ORDINATION IN POLYNOMIAL COMPLEX SENTENCES WITH CONJUNCTIONS

և, ու, կամ

G. L. GAREGINIAN

S u m m a r y

In some types of polynomial complex sentences of modern Armenian language with conjunctions *և, ու, կամ*, punctuation is not unified. In particular, it is observed in complex subordinate sentences with homogeneous subordinate clauses and in complex constructions with some principal clauses and common subordinates. In order to regulate the punctuation in the constructions with indicated components, as well as to present more clearly and non-ambiguously syntactic and semantic relations in them, before the conjunctions *և, ու, կամ* there is no need to put comma, if they connect homogenous subordinates, which are related to the same principal clause or if the composed principal clauses have a common subordinate clause (clauses). This punctuation recommendation is argued by the corresponding examples.